



<https://printo.it/pediatric-rheumatology/AM/intro>

Աֆտոզ ստամատիտով, ֆարինգիտով և լիմֆադենիտով ուղեկցվող պարբերական տենդ (PFAPA)

Տարբերակ 2016

3. Առօրյա կյանքը

3.1 Ինչպե՞ս կարող է հիվանդությունը ազդել երեխայի և նրա ընտանիքի անդամների առօրյա կյանքի վրա:

Կրկնվող տենդի դրվագները կարող են ազդել կյանքի որակի վրա: Հաճախ զգալի ուշացումով է դրվում ճիշտ ախտորոշումը, որը առաջացնում է ծնողների անհանգստությունը և երբեմն կատարվում են ոչ անհրաժեշտ բժշկական միջամտություններ:

3.2 Ի՞նչ կասեք դպրոցի մասին:

Տենդի կանոնավոր դրվագները կարող են խանգարել դպրոց հաճախելուն: Կարևոր է խրոնիկ հիվանդություն ունեցող երեխաների համար շարունակել կրթությունը: Կան մի քանի գործոններ, որոնք դպրոց հաճախելու համար խնդիրների պատճառ կարող են դառնալ, այդ պատճառով կարևոր է բացատրել ուսուցիչներին երեխայի հնարավոր կարիքների մասին: Ծնողները և ուսուցիչները պետք է անեն ամեն ինչ, որպեսզի հնարավորություն տան երեխային նորմալ ձևով մասնակցել դպրոցական կյանքին, ոչ միայն, որ երեխան լինի հաջողակ ուսման մեջ, այլ նաև որպեսզի ընդունվի և գնահատվի հասակակիցների և մեծահասակների կողմից: Երիտասարդ հիվանդների համար կարևոր է ապագա ինտեգրումը պրոֆեսիոնալ կյանքին, որը խրոնիկ հիվանդություններով հիվանդների համաշխարհային խնամքի նպատակներից մեկն է:

3.3 Ի՞նչ կասեք սպորտի մասին:

Սպորտով զբաղվելը յուրաքանչյուր երեխայի առօրյա կյանքի կարևոր մասն է: Բուժման նպատակներից մեկն է թույլ տալ երեխային վարել հնարավորինս նորմալ կյանք և զգալ, որ իրենք ոչնչով չեն տարբերվում իրենց հասակակիցներից:

3.4 Ի՞նչ կասեք սննդակարգի մասին:

Չկան խորհուրդներ յուրահատուկ սննդակարգի մասին: Ընդհանուր առմամբ, երեխաները պետք է ընդունեն իրենց տարիքին համապատասխան, բալանսավորված, նորմալ սնունդ: Աճող երեխային խորհուրդ է տրվում առողջ, բավարար քանակի սպիտակուց, կալցիում և վիտամիններ պարունակող, լավ բալանսավորված սնունդ:

3.5 Կարո՞ղ է կլիման ազդել հիվանդության ընթացքի վրա:

Ոչ, չի կարող:

3.6 Երեխան կարո՞ղ է պատվաստվել:

Այո, երեխան կարող է և պետք է պատվաստվի, սակայն բուժող բժիշկը պետք է տեղեկացված լինի մինչև կենդանի թուլացված պատվաստանյութերով պատվաստում ստանալը, և պետք է տա հստակ խորհուրդ յուրաքանչյուր դեպքի համար:

3.7 Ի՞նչ կասեք սեռական կյանքի, հղիության, հակաբեղմնավորիչների մասին:

Մինչև այժմ, գրականության մեջ չկա տվյալներ այս հիվանդների համար: Որպես ընդհանուր օրենք, այլ աուտոբորբոքային հիվանդությունների դեպքում, ավելի լավ է հղիությունը նախապես պլանավորել, ինչը թույլ կտա հարմարեցնել բուժումը, հաշվի առնելով պտղի վրա հակաբորբոքային դեղերի հնարավոր կողմնակի ազդեցությունները: